

Pacine

Թիւ 10
Յունուար 26, 1959

Արժանաշնորհ
Տ. Մեսրոպ Աւագ ԲԿՆՅ. Աւետան
Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Ռէյսիւն.

Սիրելի Տէր Մեսրոպ.

Ստացած ենք 1959 Յունուար 18 թուակիր Տէր Միական Տեղեկագիրը, որով կը տեղեկացնէք թէ Քեր Նախագահութեամբ զուգարուած Միական Ժողովին մէջ ընտրուած են Միական Խորհուրդի նոր անդամները, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձներուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ներքոյիշեալ անձերը ըստ օրինք ընտրուած են եւ իբրեւ եկեղեցւոյ պարտաճանաչ անդամները կը վայելեն ընտրողներու վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը հետեւեալ կարգով.-

- Տիարք՝ Թորոս Տէօրօզլանեան
- Գալուստ Միքայէլեան
- Մայք Գարէմեան
- Սատգիս Կարապետեան

Ա՛օրհնենք նորընտիր անդամները եւ կը մաղթենք ձեզ եւ պատուարժան Միական Խորհուրդիդ բոլոր անդամներուն Համերաշխ եւ բեղմնաւոր գործունէութիւն ի պայծառութիւն Հայաստանեայց ՍՅ Եկեղեցւոյ եւ յօգուտ մեր սիրեցեալ Ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունի:
եւ օրհնութեամբ
Ազօթարար

ՍԻՌՆ ԱՐՁԵՌԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի